ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՎՉՅԱՆ ԱՆՆԱ ԱՐԱՐԱՏԻ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ԺԹ. 00.05 «Զարգացման և կրթության հոգեբանություն (մանկավարժական, տարիքային, հատուկ)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հասմիկ Սոսի Հարությունյան**

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. սեպտեմբերի 30-ին, ժամը 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. օգոստոսի 29-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ընտանիքը երեխայի կյանքի և զարգացման կարևորագույն օղակն է, որտեղ տիրող հոգեբանական մթնոլորտը ներազդում է ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի, հատկապես՝ երեխայի վրա:

Հոգեբանորեն բարենպաստ ընտանիքը մեծ սիրով և պատասխանատվությամբ է վերաբերվում իր բոլոր պարտականություններին և դերերին, իրականացնում իր գլխավոր գործառույթները՝ բավարարելով ընտանիքի անդամների՝ հուզական աջակցության, անվտանգության զգացումի, սեփական «ես»-ի զգացման և նշանակության, հուզական ջերմության և սիրո պահանջները, ինչը երեխայի անձի առողջ զարգացման գլխավոր պայմանն է:

Այսօր ընտանիքը շատ խոցելի է, քանի որ մեկը մյուսին հաջորդող բացասական գործոնների ազդեցությունը՝ աղետ, պատերազմ, տնտեսական ճգնաժամեր, մի շարք այլ սթրեսային գործոնների հետ զուգընթաց, բացասաբար են անդրադառնում յուրաքանչյուր անձի հոգեկան առողջության վրա: Երեխան, որը ընտանիքի ամենից փոքր, անպաշտպան էակն է՝ միշտ ամենախոցելին է նման պայմաններում, քանի որ նա «ստանում է միայն այն, ինչ նրան կարող են տալ ծնողները»: Ցավոք, հոգեբանական անբարենպաստ ընտանիքներում, դա ծնողների կողմից անտարբերությունն է, սառնասրտությունը, դաժան վերաբերմունքը, ինչը մեծապես վտանգում է երեխայի անձի, հոգեկանի առողջ և ներդաշնակ զարգացմանը և ողջ կյանքում ուղեկցում նրան հիշողությունների, տպավորությունների, տարաբնույթ դրսևորումների տեսքով: Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա համերաշխ ընտանիք, ստանա միայն սեր և ջերմություն, իսկ հոգեբանորեն անբարենպաստ ընտանիքներում դա մնում է միայն որպես «մանկական երազանք»:

Այսօր հոգեբանորեն անբարենպաստ ընտանիքները շատ մեծ թիվ են կազմում ողջ աշխարհում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների համաձայն, ամբողջ աշխարհում 275 մլն երեխա տարեկան ենթարկվում է ընտանեկան բռնությունների:

Այս հիմանխնդրի շուրջ կատարած մի շարք ուսումնասիրություններ և մեր հետազոտությունները ցույց են տվել, որ հայ ընտանիքում, որը դարեր ի վեր բնութագրվել և աշխարհում հայտնի է եղել իր բարոյականությամբ, միասնականությամբ, նվիրվածությամբ, որտեղ ընտանիքի անդամների միջև ընկած է եղել միայն սերն ու հարգանքը, տարածված երևույթներ են դարձել ընտանիքի անկայունությունը, կոնֆլիկտների և բռնության դրսևորումները, նկատվում է նաև մուրացկան և անօթևան երեխաների թվի աճ և այլն: «Հայ օգնության ֆոնդ» երեխաների աջակցության կենտրոնի պաշտոնական տվյալների համաձայն՝ տարվա ընթացքում միջին հաշվով ընդունվող 150 երեխաներից կեսից ավելին ընտանեկան բռնությունների զոհ են:

Ուսումնասիրությունները փաստում են այն մասին, որ երեխաների հանդեպ բռնությունը գոյություն է ունեցել մարդկության պատմության ողջ ընթացքում: Սակայն, նշենք, որ տարբեր դարերի ընթացքում, երեխայի հանդեպ վերաբերմունքի անթույլատրելի ձևերի մասին պատկերացումներն էականորեն տարբեր են եղել, ինչը պայմանավորված էր նրանով, որ բոլոր դարաշրջաններում տարբեր են եղել հասարակարգերը, կրոնական, քաղաքական, գաղափարախոսությունները, ազգային ավանդույթները, արժեքները:

Ռուս հոգեբան Ե. Վոլկովան գտնում է, որ մեր օրերում փոխվել են երեխայի նկատմամբ բռնության դրսևորումները, և ժամանակակից հասարակության մեջ ընտանեկան բռնություն է համարվում անհատի կողմից իր հետ սեռական կամ այլ նշանակալի կապի մեջ գտնվող մյուս անձի հանդեպ ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վիրավորանքի կամ բռնության գործողությունը կամ դրա սպառնալիքը: Ըստ Վոլկովայի՝ բռնություն է նաև ծնողների կողմից իրենց ծնողական պարտականությունների, երեխաների կարիքների անտեսումն է՝ սննդի, հագուստի, բնակարանի, դաստիարակության, կրթության, բժշկական օգնության, երեխային պատվաստման չներկայացնելը, անուշադրությունը, հուզական անտարբերությունը, սեփական երեխաների հանդեպ կոպտությունը, երեխային բառացի վիրավորանք հասցնելը, մարդկային արժանապատվության ստորացումը, հայհոյանքները, ծաղրանքը, երեխայի օտարումը սոցիալական նորմալ շփումից և անձնական հույզերի ներքին սահմանների ցանկացած խախտումը:

Չնայած նրան, որ երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունը կիրառվել է պատմական տարբեր դարաշրջաններում, այնուամենայնիվ մինչև օրս բավարար չափով ուսումնասիրված չէ հատկապես այն հիմնահարցը, թե ինչպես է ընտանեկան բռնությունը ազդում երեխայի պատկերացումների, դիրքորոշումների, արժեհամակարգի, ապագա ընտանեկան կյանքի մոդելի ձևավորման վրա, և, վերջապես, ո՞ր սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններն են ընկած երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության պատճառականության հիմքում:

Ընտանեկան անբարենպաստության պայմաններում երեխաները խոցելի են դառնում բռնության տարբեր դրսևորումների՝ հոգեբանական, ֆիզիկական, սեռական բռնության, անտեսված լինելու, նույնիսկ սեփական ծնողի կողմից սպանված լինելու նկատմամբ: Ցավոք, երեխաները ընդօրինակում են ծնողների նման վարքը և այն վերարտադրում ծնողների, ուսուցիչների, հասակակիցների հետ շփման ընթացքում, իսկ հետագայում այն կարող է վերարտադրվել սեփական ընտանիքում և երեխաների դաստիարակության գործընթացում:

Բռնության ենթարկված երեխաների առանձնահատկությունների ուսումնասիրությունը, բռնության հետևանքների, հոգեբանական տրավմաների ախտորոշման և հոգեշտկողական ծրագրերի ստեղծման անհրաժեշտությունը ներկա ժամանակաշրջանում դարձել է ժամանակի պահանջ, քանի որ մանկության տարիներին բռնության ենթարկվելը, հատկապես ծնողի կողմից, կարող է դառնալ հանցավորության, ինչպես նաև հետագայում հասարակության մեջ սեփական մանկական փորձի վերարատադրման պատճառ:

Ուստի մեր առջև խնդիր ենք դրել հնարավորինս անդրադառնալ վերոհիշյալ խնդիրներին և գործնական լուծումներ առաջարկել:

Հետազոտության օբյեկտն է երեխաների հանդեպ ընտանեկան բռնության երևույթը և դրա ազդեցությունը երեխայի՝ հետագա պատկերացումների և սոցիալական դիրքորոշումների վրա:

Հետազոտության առարկան է երեխաների նկատմամբ բռնությունների հոգեբանական պատճառականության և առանձնահատկությունների բացահայտումը ընտանիքում, որը կարող է բացասաբար անդրադառնալ երեխայի «ապագա ընտանիքի» մոդելի վերաբերյալ առողջ պատկերացումների ձևավորման վրա:

Հետազոտության գիտական վարկածը մեր այն ենթադրությունն է որ.

1. երեխայի նկատմամբ ընտանեկան բռնությունը ազդում՝ է երեխայի պատկերացումների, սոցիալական դիրքորոշումների ձևավորման վրա՝ առաջացնելով «ապագա ընտանիքի» մոդելի խաթարումներ: Տղաների դեպքում խեղաթյուրվում է կնոջ կերպարը, աղջիկների դեպքում՝ մոր,
2. «ապագա ընտանիքի» մոդելի խեղաթյուրումը հետագայում դրսևորվում է սեփական ընտանիքում և հանդես է գալիս որպես ընտանեկան բռնության պատճառ. տղաների դեպքում բռնություն կնոջ նկատմամբ, աղջիկների դեպքում՝ երեխայի:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտանեկան բռնության ենթարկված երեխաների անձի ձևավորման առանձնահատկությունները, նրանց պատկերացումները ապագա ընտանիքի մոդելի վերաբերյալ, բռնության հնարավոր պատճառները: Ինչպես նաև կարևոր նպատակ է ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձի զարգացման գործընթացում բռնության բացասական հետևանքները նախազգուշացնելու և հաղթահարելու համար համապատասխան մեթոդների և միջոցների մշակումը:

Հետազոտության նպատակով առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության երևույթի, տարբեր դարաշրջաններում ընտանեկան բռնության պատճառականության գիտական մեկնաբանությունները:
2. Բացահայտել մեր կողմից հետազոտված երեխաների կազմում ընտանեկան բռնության ենթարկված երեխաներին:
3. Հետազոտել ընտանեկան բռնության ենթարկված երեխաների անձնային առանձնահատկությունները և պատկերացումները ընտանիքի ապագա մոդելի վերաբերյալ:
4. Բացահայտել և բնութագրել ընտանեկան բռնության պատճառները երեխայի նկատմամբ:
5. Մշակել հոգեբանական հանձնարարականներ բռնության ենթարկված երեխաների անձի զարգացման գործընթացում, փոխհարաբերություններում ընտանեկան բռնության բացասական հետևանքները նախազգուշացնելու և հաղթահարելու համար:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների տեսական նշանակությունը այն է, որ բացահայտված հոգեբանական օրինաչափությունները և հատկանշական՝ բռնության ենթարկված երեխային բնորոշ առանձնահատկությունները, հարստացնում են ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությունների հոգեբանական պատճառականության, բռնության ենթարկված երեխայի անձի և վարքագծի մասին գիտական պատկերացումները, ինչպես նաև հիմնավորում տվյալ հիմնահարցի հետագա բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Պետք է նշել, որ առաջին անգամ փորձ է արվում դուրս բերել երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության պատճառականությունը, այն դիտարկելով «ապագա ընտանիքի» վերաբերյալ պատկերացումների տեսանկյունից: Մեր կատարած ուսումնասիրությունները հարստացնում են ընտանիքի, անձի հոգեբանության հիմնախնդրի մասին տեսական գիտելիքները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի՝ ընտանիքի մոդելի մասին պատկերացումների և առանձնահատկությունների, ընտանեկան բռնության պատճառների և երեխայի անձի ձևավորման վրա ընտանեկան բռնության ազդեցության, երեխաների

անձնային և վարքային առանձնահատկությունների, բռնության երևույթի հիշողությունների ու հետևանքների հետագա դրսևորումների ուսումնասիրությունն ու բացահայտումը հնարավորություն է տալիս երեխաների հետ աշխատող մասնագետներին՝ հոգեբան, մանկավարժ, դաստիարակ, նոր գիտելիքներ կիրառել երեխաների հետ աշխատանքների ընթացքում, ինչպես նաև ծնողներին՝ երեխայի անձի՝ ծնող-երեխա փոխհարաբերությունների համատեքստում ընկալմանը, սեփական անձնային, խնդիրների հաղթահարմանն ու լուծմանը, կիրառել այնպիսի դաստիարակչական մեթոդներ, որոնք կնպաստեն երեխայի անձի առողջ զարգացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են հոգեբանական ուղեցույց հանդիսանալ այս հիմնախնդիրը ուսումնասիրող այլ հոգեբանների համար, ինչպես նաև օգտագործվել պրակտիկ հոգեբանական գործունեության մեջ: Ստացված արդյունքների հիման վրա կարելի է մշակել «Ընտանեկան բռնությունը և դրա հետևանքները» դասընթաց և ընդգրկել «Ընտանեկան հոգեբանության» դասընթացի մեջ որպես առանձին բաժին:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են ծառայել երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության հիմնախնդրի ուսումնասիրությունները, որոնց անդրադարձել են մի շարք հոգեբաններ՝ Զ. Ֆրեյդ , Ա. Ադլեր, Կ. Հորնի, Է. Ֆրոմմ, Ջ. Բոուլբի, Է. Բերն, Կ. Շտայներ, Ա. Միլլեր, Ե. Վոլկովա, Վ. Ցելույկո, Ն. Օ. Զինովյևա, Ն. Ֆ. Միխայլովա, Ի. Գ. Մալկինա-Պըխ, Տ. Դ. Զինկևիչ-Եվստիգնեևա, Ե. Վ. Պյատնիցկայան, Յու. Անտոնյան, Ս. Արզումանյան և այլն՝ փաստելով այն մասին, որ երեխայի նկատմամբ բռնությունն ու դաժան վերաբերմունքը մեծ ազդեցությունն են թողնում երեխայի և՛ ֆիզիկական և՛ հոգեկան զարգացման վրա՝ վնասելով երեխայի զարգացման գրեթե բոլոր մակարդակները՝ հուզական, կոգնիտիվ (ճանաչողական), վարքային:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ դիտումը, որի տվյալները ամփոփվել են Ե. Վոլկովայի դիտարկման քարտում, զրույցը, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդը, Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանը, Ռենե Ժիլի միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշման մեթոդիկան, Ե. Վոլկովայի «անավարտ նախադասություններ» մեթոդիկան, «Ինչն է վախեցնում ինձ գիշերը երազում և ինչից եմ վախենում ցերեկը» պրոյեկտիվ մեթոդիկան, դերային խաղերի մեթոդը, անավարտ հեքիաթի մեթոդը, Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը», Ռ. Բ. Կետտելի «Բազմագործոն անձնային հարցարանի» մանկական տարբերակը:

Հետազոտության գիտական նորույթը: Իրականացված հետազոտությունները որոշակի նորույթ է՝ ընտանիքի, անձի, սոցիալական հոգեբանության բնագավառում: Մի կողմից ուսումնասիրության առարկա է դարձել երեխաների նկատմամբ բռնությունների հոգեբանական պատճառականությունը ընտանիքում, մյուս կողմից այն, թե ինչպես է ընտանեկան բռնությունը ազդում երեխայի «ապագա ընտանիքի» մոդելի ձևավորման վրա և դրանց պատճառահետևանքային կապը: Ինչպես նաև դուրս են բերվել ընտանեկան բռնության հնարավոր պատճառները և մշակվել դրանց հաղթահարման ուղիները: Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձնային փոփոխությունները և պատկերացումները նոր հոգեբանական մեկնաբանություն են ստացել՝ դիտարկվելով այլ տեսանկյունից:

Հետազոտության փորձագիտությունը և տվյալների հուսալիությունը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները

պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Զարգացման և կիրառական հոգեբանություն» ամբիոնում, Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 դպրոցում, «ՀՕՖ» երեխաների աջակցության կենտրոնում, «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» գիտաժողովի շրջանակներում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի շրջանակներում, որտեղ զեկուցվել է աշխատանքի գիտագործնական որոշ դրույթների մասին:

Ստացված արդյունքների հավաստիությունը պայմանավորված է օգտագործված մեթոդների հուսալիության և վալիդայնության բարձր աստիճանով, ինչպես նաև մեթոդների քանակով: Բացի այդ, հետազոտության հավաստիության և հուսալիության մասին է խոսում ուսումնասիրված երեխաների քանակը, ստացված տվյալների որակական և քանակական վերլուծությունը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնությունը հանգեցնում է «ապագա ընտանիքի» մոդելի խեղաթյուրմանը: Տղաների մոտ առաջանում է կնոջ կերպարի խեղաթյուրում, աղջիկների մոտ՝ մոր:
2. «Ապագա ընտանիքի» մոդելի խեղաթյուրումը հետագայում դրսևորվում է սեփական ընտանիքում և հանդես է գալիս որպես ընտանեկան բռնության պատճառ. տղաների դեպքում բռնություն կնոջ նկատմամբ, աղջիկների դեպքում՝ երեխայի:
3. Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնությունը հանգեցնում է նրա անձնային առանձնահատկությունների ձևախեղմանը (դեֆորմացմանը):
4. Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձի, դիրքորոշումների հետագա ձևախախտումը հնարավոր է նախազգուշացնել և հաղթահարել, եթե ժամանակին բացահայտվի բռնության փաստը և ցուցաբերվի համապատասխան օգնություն:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 165 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված օբյեկտը, առարկան, առաջադրված է գիտական վարկածը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացված են տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, գիտական նորույթը, սահմանված են պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձագիտությունն ու տվյալների հուսալիությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունը որպես հոգեբանական հիմնախնդիր» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ **«Երեխաների հանդեպ ընտանեկան բռնության հիմնախնդրի պատմական ակնարկ»** ենթագլխում քննարկվում է երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության տարածվածությունը հասարակության զարգացման տարբեր ժամանակահատվածներում՝ անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը, և տարածաշրջաններում՝ հին Հունաստանում, Հռոմում, Հնդկաստանում, Չինաստանում, հին արաբական պետություններում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Հայաստանում:

Այս ենթագլխում քննարկվել և վերլուծության է ենթարկվել Ջ. Փեյնի «Երեխան մարդկության առաջընթացում», Ֆ. Արյեսի «Երեխան և ընտանեկան կյանքը հին հասարակարգում», Լլոյդ դե Մոզի «Հոգեպատմություն» աշխատությունները, որտեղ հեղինակները անդրադարձել են երեխաների նկատմամբ բռնությունների տարածվածության հիմնախնդրին պատմական տարբեր դարաշրջաններում. նկարագրվել է երեխաների կենսափորձը, երեխաների նկատմամբ ընտանիքում բռնության անցյալի դրսևորումները, տարբեր պետություններում իշխող հասարակարգերի, գաղափարախոսությունների, արժեքների, հավատքի ազդեցությունը ներընտանեկան փոխհարաբերությունների, երեխայի հանդեպ վերաբերմունքի բնույթի, դաստիարակության ոճի վրա:

Ուսումնասիրելով «մանկության պատմությունը»՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ տարբեր դարաշրջաններում երեխայի նկատմամբ վերաբերմունքը կարող էր հասնել անմարդկայինի. որդեսպանություն, ի ծնե կյանքի իրավունք չստանալը, արյունապղծություն, երեխային օտար ընտանիքին հանձնելը, վաղ տարիքից ծանր աշխատանք կատարելը և այլն:

Նշենք, որ միայն 18-րդ դարից սկսած էականորեն սկսեց փոխվել երեխայի նկատմամբ վերաբերմունքը, և մանկության շրջանը սկսեցին դիտել որպես որոշիչ՝ անձի հոգեֆիզիկական զարգացման գործընթացում: Հիմնախնդրի նոր ընկալմանը նպաստեցին նաև մի շարք իրադարձություններ և զարգացումներ, տարբեր գիտակարգերի, մասնավորապես՝ հոգեբանության, ուսումնասիրություններն ու հետազոտությունները:

Երկրորդ՝ **«Երեխաների հանդեպ ընտանեկան բռնության հիմնախնդիրը գիտության մեջ»** ենթագլխում ներկայացվում են տվյալ հիմնախնդրի վերաբերյալ տարբեր գիտակարգերի՝ փիլիսոփայության (Ի. Կանտ, Հեգել, Ֆ. Նիցշե), սոցիոլոգիայի (Մ. Վեբեր, է. Դյուրկհեյմ, Ռոբերտ Կ. Մերտոն, Մ. Կաուֆման, Մ. Կիմմել, Ի. Կոնը), իրավաբանական գիտությունների՝ (Վ. Ֆոկս, Վ. Կուդրյավցև, Ա. Սախարով, Յու. Անտոնյան), բժշկության (Տարդյե Օգյուստ Ամբրոուզ, Հենրի Կեմպե), մանկավարժության (Ն. Գ. Չերնիշևսկի, Ն. Ա. Դոբրոլյուբով, Ն. Ն. Պիրոգով, Կ. Դ. Ուշինսկի, Պ. Ֆ. Լեսգաֆտ, Ա. Ս. Մակարենկո) և հատկապես հոգեբանության մոտեցումները (Ջ. Ֆրեյդ, Կ.Հորնի, Ջ. Բոուլբի, Ջ. Դոլլարդ, Ն. Միլլեր, Ա. Միլլեր, Ե. Վոլկովա, Վ. Ցելույկո, Ն. Օ. Զինովյևա, Ն. Ֆ. Միխայլովա, Ի. Գ. Մալկինա-Պըխ, Ս. Արզումանյան), կարևորելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գիտության սկզբունքները, կատեգորիաները ու հետազոտության արդյունքները հարստացնում և փոխլրացնում են միմյանց:

Հոգեբանության մեջ բռնության հիմնախնդիրն իրենից ներկայացնում է հետազոտության ընդգրկուն ոլորտ, որը համաշխարհային հոգեբանության մեջ առավել ակտիվ զարգացում է ապրել 20-րդ դարի վերջին քառորդում:

Հոգեբանության մեջ գոյություն ունեն երեխաների նկատմամբ բռնության բացատրություններ հոգեբանական տարբեր ուղղությունների՝ հոգեվերլուծության, բիհեվիորիզմի, սոցիալական ուսուցման տեսության, ինչպես նաև տարբեր գիտնականների կողմից առաջ քաշած տեսությունների կողմից: Հոգեվերլուծությունը, մասնավորապես ավստրիացի հոգեբան, հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրեյդը, անձի հոգեկանի առողջ զարգացման գործընթացում, նույնպես կարևորում էր մանկական տարիքը: Բրիտանացի հոգեվերլուծող Ջ. Բոուլբին եկել է այն եզրակացության, որ բռնության ենթարկված երեխաների հետագա ագրեսիվ վարքագծի դրսևորումները ձևավորվել են դեռ վաղ տարիքում: Բիհևիորիստների տեսության հիմքում ընկած է այն, որ երեխայի հոգեկանի զարգացումը պայմանավորում է հիմնականում սոցիալական միջավայրը: Երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի և բռնության հիմնախնդիրը, անբարենպաստ ընտանիքի տեսակները և երեխայի անձի ձևավորման հարցում դրա ազդեցության բացասական հետևանքները՝ ինտենսիվորեն ուսումնասիրվում է ժամանակակից ռուս հոգեբանության մեջ՝ Ե. Վոլկովայի, Վ. Ցելույկոյի, Ն. Օ. Զինովյեվայի, Ն. Ֆ. Միխայլովայի, Ի. Գ. Մալկինա -Պըխի և ուրիշների կողմից:

Այսպիսով՝ երեխաների նկատմամբ բռնության հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունները վկայում են, որ այն գիտական հետաքրքրություն է ներկայացրել պատմական տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր գիտությունների կողմից:

Ամփոփելով առաջին գլուխը՝ նշենք, որ երեխայի հանդեպ ընտանեկան բռնության հիմնախնդրի պատմական ակնարկից պարզ է դառնում, որ հասարակությունն աստիճանաբար գիտակցել և ձևակերպել է մանկության հանդեպ դաժան վերաբերմունքը որպես հասարակական խնդիր, ինչն էլ նպաստել է հիմնախնդրի գիտական ուսումնասիրություններին՝ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մանկավարժության, իրավաբանական գիտությունների, հոգեբանության: Եվ չնայած հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրություններին՝ այն պահանջում է նորանոր մոտեցումներ և լուծումներ:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ՝ «Երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունների պատճառականության փորձարարական հետազոտություն» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների անձնային և վարքային դրսևորումները»** ենթագլխում ներկայացված են մեր կողմից հետազոտված ընտանեկան բռնության ենթարկված երեխաների, նրանց ծնողների անձնային և վարքային դրսևորումների շուրջ առկա դիտարկումները, ինչպես նաևբերվում են հայտնի մարդկանց՝ Ֆեոդոր Դոստոևսկու, Իոսիֆ Ստալինի, Օնորե դը Բալզակի կենսագրությունից փաստեր, որոնց մանկական «դաժան» փորձը իր դրսևորումներն ու արտացոլանքն ունեցավ կյանքի տարբեր ոլորտներում և բնագավառներում՝ անձնական կյանքում, քաղաքականության, արվեստի, գրականության և այլն:

Նկարագրված դեպքերի հոգեբանական վերուծությունը մեզ հնարավորություն ընձեռեց ցույց տալ, որ անձի ձևավորումն ու զարգացումը պայմանավորում են ոչ միայն ժառանգական գործոնները, այլ նաև դաստիարակությունը և մանկության շրջանի տպավորությունները, հիշողությունները, որոնք նույնպես պայմանավորում են անձի զարգացումը:

Երկրորդ՝ **«Հետազոտության կազմակերպումը և մեթոդիկան»** ենթագլխում նկարագրված է հետազոտության կազմակերպման ընթացքը և մեթոդները:

Հետազոտությունները անցկացրել ենք երկու հիմնական փուլով.

1. բացահայտել ընտանեկան բռնության ենթարկված երեխային,
2. բացահայտել երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության հոգեբանական պատճառները, երեխայի պատկերացումները, դիրքորոշումները ապագա ընտանիքի մոդելի վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում անհրաժեշտություն առաջացավ նաև ուսումնասիրել ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձը:

Ընտանեկան բռնության ենթարկված երեխաներին բացահայտելու նպատակով օգտագործել ենք հոգեբանության ավանդական մեթոդներ՝ դիտումը՝ տվյալները ամփոփելով Ե. Վոլկովայի դիտարկման քարտում, զրույցը, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդը, Յա. Վարգայի և Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ հարցարանը», Ռենե Ժիլի միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշման մեթոդիկան, Ե. Վոլկովայի «անավարտ նախադասություններ» մեթոդիկան, «Ինչն է վախեցնում ինձ գիշերը երազում և ինչից եմ վախենում ցերեկը» պրոյեկտիվ մեթոդիկան:

Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության հոգեբանական պատճառների, երեխայի՝ ապագա ընտանիքի մոդելի վերաբերյալ պատկերացումների, դիրքորոշումների բացահայտման փուլում կիրառվել է դերային խաղերի մեթոդը, անավարտ հեքիաթի մեթոդը, Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը»:

Երեխայի նկատմամբ բռնությունների սուբյեկտիվ՝ անձնային պատճառները ուսումնասիրելու նպատակով կիրառել ենք Ռ. Բ. Կետտելի «Բազմագործոն անձնային հարցարանի» մանկական տարբերակը:

Երրորդ՝ «**Հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծություն»** ենթագլխում ներկայացված և վերլուծված են փորձարարական ճանապարհով ստացված արդյունքները:

Հետազոտության մեջ ընդգրկել ենք կրտսեր դպրոցական տարիքի (6-9 տարեկան) 445 երեխա՝ 229 տղա, 216 աղջիկ, որոնից ընտրվել է 275՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխա (164 տղա, 111 աղջիկ), ինչպես նաև այդ երեխաների 105 ծնող (մայր): Հետազոտությունները անց են կացվել Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 դպրոցում՝ 260 երեխա, «Զատիկ» մանկատանը՝ 49 երեխա, «Մարի Իզմիրյանի» անվան մանկատանը՝ 38 երեխա, «ՀՕՖ» երեխաների աջակցության կենտրոնում՝ 98 երեխա:

Բռնության ենթարկված երեխաներին բացահայտելու ուղղությամբ կատարված հետազոտություններին մասնակցել են ընդգրկված կրտսեր դպրոցական՝ 6-9 տարեկան, բոլոր երեխաները՝ 445 երեխա (229 տղա և 216 աղջիկ):

Հետազոտության առաջին՝ այսինքն **ընտանեկան բռնության ենթարկված երեխաների բացահայտման փուլի** շրջանակներում անցկացրած հետազոտությունների արդյունքների համաձայն՝ ընտանեկան բռնության է ենթարկվել 275 երեխա՝ այսինքն հետազոտվածների 61, 8 %-ը, որից 164-ը տղա է, 111-ը աղջիկ:

Ստորև ներկայացնենք առաջին փուլի՝ երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության բացահայտման, արդյունքների ամփոփ նկարագիրը աղյուսակի և գծապատկերի տեսքով.

Աղյուսակ 1.

Հետազոտության արդյունքները					
Երեխաների տարիքը	6	7	8	9	ընդ. թիվ
Երեխաների քանակը	167	104	79	98	445
Ընտանեկան բռնության ենթարկվածներ	71	76	89	41	275
տղա	42	39	51	19	164
աղջիկ	29	37	38	22	111

Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության բացահայտման փուլի արդյունքներ

Գծապատկեր 1.



Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության բացահայտման փուլի գծապատկեր

Երկրորդ՝ երեխայի ապագա ընտանիքի մոդելի վերաբերյալ պատկերացումների, դիրքորոշումների բացահայտման փուլի արդյունքների համաձայն ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մոտ բացահայտվել

են ապագա ընտանիքի վերաբերյալ, մասնավորապես տղաների մոտ՝ կնոջ կերպարի, աղջիկների մոտ՝ մոր, խեղաթյուրված պատկերացումներ, դիրքորոշումներ: Տարբեր աստիճանի խեղաթյուրված պատկերացումներ առկա են գրեթե բոլոր հետազոտված երեխաների մոտ՝ տղաների դեպքում բացասական վերաբերմունք հակառակ սեռի նկատմամբ ունեն հետազոտվածների 93,3 %–ը, բացասական վերաբերմունք երեխայի նկատմամբ՝ 6,7 %-ը, աղջիկների դեպքում բացասական վերաբերմունք հակառակ սեռի նկատմամբ ունեն հետազոտված աղջիկների 10,9 %–ը, բացասական վերաբերմունք երեխայի նկատմամբ՝ 89,2 %-ը: Ստորև ներկայացնենք երկրորդ փուլի արդյունքները գծապատկերի տեսքով.

Գծապատկեր 2.



Երկրորդ փուլի արդյունքների գծապատկեր. ընտանիքի մոդելի խեղաթյուրումները ըստ սեռային առանձնահատկությունների

Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձը (երեխայի նկատմամբ ընտանեկան բռնությունների սուբյեկտիվ՝ անձնային պատճառները) ուսումնասիրման փուլում կիրառվեց Կետտելի բազմագործոն անձնային հարցարանը, որը մեզ հնարավորություն տվեց խորապես ճանաչել ընտանեկան բռնության ենթարկված երեխային և բացահայտել նրանց անձնային առանձնահատկությունները: Կետտելի բազմագործոն անձնային հարցարանի օգնությամբ ստացած արդյունքների համաձայն՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մոտ ցածր է բարեխղճության մակարդակը, ինքնակառավարման մակարդակը, բարձր հուզական անկայունության

մակարդակը: Այս մեթոդով հաստատվեցին մեր դիտումների և հետազոտության մյուս փուլերի արդյունքները, քանի որ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մի մասը աչքի է ընկնում անկանոն շարժունությամբ, անբարեխղճությամբ կամ մարդկանց նկատմամբ անտարբերությամբ, եսասիրությամբ և այլն: Ստացված արդյունքների համաձայն հուզական անգրգռվողականության բարձր մակարդակով աչքի են ընկել հետազոտված տղաների 83,4 %-ը, աղջիկների՝ 69,7 %-ը, բարեխղճության ցածր մակարդակով աչքի են ընկել հետազոտված տղաների 81,1 %–ը, աղջիկների՝ 67,1 %–ը, ինքնակառավարման ցածր մակարդակով աչքի են ընկել հետազոտված տղաների 82,1 %–ը, աղջիկների՝ 57,9 %–ը:

Ատենախոսության երրորդ՝ «Երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունների պատճառականությունը և դրա հոգեբանական հետևանքների կանխարգելման և հաղթահարման ուղիները» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Երեխայի հանդեպ ընտանեկան բռնության պատճառականությունը» ենթագլխում ներկայացված են երեխայի հանդեպ ընտանեկան բռնության պատճառներն ու ռիսկի գործոնները՝ կարևորելով դրանց դիտարկումը մեկ ամբողջության մեջ: Այս հիմնախնդրի շուրջ կատարված ուսումնասիրություններն ու մեր կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի նկատմամբ բռնության կիրառման պատճառները բազմաթիվ են:

Չնայած այն հանգամանքին, որ երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության պատճառները բազմաթիվ են, այնուհանդերձ մենք փորձել ենք առանձնացնել այն պատճառները, որոնք բացահայտել ենք իրականացված հետազոտության ընթացքում և բաժանել դրանք երկու հիմնական խմբի՝ սուբյեկտիվ (անձնային) և օբյեկտիվ: Հարկ ենք համարում նշել, որ պատճառների ուսումնասիրման ընթացքում՝ կարևորել ենք տվյալ հարցի շուրջ մի շարք հոգեբանների՝ Ս. Արզումանյանի, Ե. Վոլկովայի, Ն. Օ. Զինովյևայի, Օ. Ա. Կարաբանովայի, Մ. Վ. Սմագինայի մոտեցումները: Նրանց կողմից առանձնացվել են ընտանիքի այնպիսի տեսակներ, որտեղ սոցիալ-տնտեսականի և բարոյահոգեբանականի հարաբերության միջև անհամաձայնությունը երեխայի նկատմամբ բռնության պատճառ կարող է հանդիսանալ իսկ ընտանիքում ձևավորված անառողջ հոգեբանական մթնոլորտի պայմաններում մեծանում է երեխաների հանդեպ բռնություն գործադրելու հավանականությունը: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ երեխայի հանդեպ բռնությունը հանդիպում է հասարակության ցանկացած շերտում, քանի որ անկայուն տնտեսական համակարգի բացասական ազդեցությանն այս կամ այն չափով ենթակա են բոլոր ընտանիքները, սակայն, նյութական անբարենպաստությունը և հատկապես ընտանիքի աղքատության շեմին գտնվելը բերում է նրան, որ երեխաների հանդեպ բռնության դեպքերը ավելի հաճախակի են, քան սոցիալապես բարենպաստ վիճակում գտնվող ընտանիքներում:

Այս հարցի շուրջ կատարած ուսումնասիրություններից և մեր կատարած հետազոտություններից պարզ է դառնում, որ ընտանիքում երեխայի հանդեպ բռնության հանգեցնում է միջավայրի, ընտանիքի և անհատականության մակարդակներում առկա գործոնների համալիր ազդեցությունը:

Ամփոփելով վերը նշվածը ներկայացնենք երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության այն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք բացահայտել ենք հետազոտությունների ընթացքում:

Աղյուսակ 2.

<table>
<tr><th colspan="3">Պատճառներ</th></tr>
<tr><td colspan="3">Անմիջական և միջնորդավորված</td></tr>
<tr><th colspan="2">Սուբյեկտիվ</th><th>Օբյեկտիվ</th></tr>
<tr><td>Ծնողի՝ ընտանեկան մոդելի խեղաթյուրված պատկերացումները</td><td rowspan="7">Ընտանեկան բռնության ենթարկված երեխաներ</td><td>Բազմազավակ ընտանիք</td></tr>
<tr><td rowspan="2">Ծնողի՝ «իդեալական երեխայի» մասին պատկերացումները</td><td>Երիտասարդ ծնողների ընտանիք</td></tr>
<tr><td>Ոչ լիարժեք ընտանիք</td></tr>
<tr><td rowspan="2">Ամուսինների փոխհարաբերություններում հոգեբանական խնդիրների առկայություն</td><td>Կոնֆլիկտային ընտանիք</td></tr>
<tr><td>Սոցիալապես մեկուսացած ընտանիք</td></tr>
<tr><td>Հուզական անգրագիտության բարձր մակարդակը</td><td>Քրեածին հոգեբանական մթնոլորտով և հարաբերություններով ընտանիք</td></tr>
<tr><td>Բարեխղճության ցածր մակարդակը</td><td rowspan="2">ԶԼՄ-ներով բռնության տեսարանների ցուցադրում</td></tr>
<tr><td>Ինքնաքննակառավարման ցածր մակարդակը</td></tr>
<tr><td colspan="2"></td><td>Հասարակության մեջ տեղ գտած այլ անբարենպաստ երևույթները</td></tr>
</table>

Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության հոգեբանական պատճառներ

Երկրորդ՝ «Երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունների հոգեբանական հետևանքների կանխարգելման և հաղթահարման ուղիները» ենթագլխում մշակվել և ներկայացվել է ընտանեկան բռնությունը նախազգուշացնելու և հաղթահարելու ուղղությամբ տարվող հոգեկարգավորիչ աշխատանքները, որոնք կազմակերպվել են երկու փուլով.

1. աշխատանք ծնողների հետ,
2. աշխատանք երեխաների հետ:

Առաջին փուլում իրականացված աշխատանքներն իրենց մեջ ընդգրկել են հետևյալ տարրերը.

1. Զրույցներ ծնողների հետ երեխայի հանդեպ ընտանեկան բռնության երևույթի, դաստիարակության մեջ բռնության տարրերի անընդունելության, դրանց անդառնալի հետևանքների մասին:
2. Զրույցներ՝ երեխայի տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ:
3. Մասնագիտական խորհրդատվություններ ծնողների համար բռնության ենթարկված երեխաների մոտ հոգեբանական մի շարք խնդիրների նախազգուշացնելու և հաղթահարելու ուղղությամբ:

Հոգեկարգավորիչ աշխատանքների առաջին փուլում կարևորել ենք այն հանգամանքը, որ իմանալով դաստիարակման նպատակով անթույլատրելի միջոցների, բռնության, դաժան վերաբերմունքի դրսևորումների երեխայի անձի զարգացման գործընթացում անդառնալի բացասական հետևանքների մասին, ստանալով նոր հոգեբանական տեղեկություններ երեխայի անձի, տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ, ընդունելով որոշ խորհուրդներ և ձգտելով հետևել դրանց՝ ծնողներն ավելի արդյունավետ լուծումներ կգտնեն՝ երեխաների հետ փոխհարաբերություններում:

Հոգեկարգավորիչ աշխատանքների երկրորդ փուլում աշխատանքները կրել են թե՛ անհատական և թե՛ խմբային բնույթ, որոնց մասնակցել են 6-9 տարեկան 85 ընտանեկան բռնության ենթարկված երեխա: Յուրաքանչյուր խումբ բաղկացած է եղել 10-12 հոգուց: Աշխատանքները տևել են երեք ամիս: Հանդիպումները երեխաների հետ իրականացնում էինք շաբաթական երկու անգամ՝ 2,5 ժամ տևողությամբ: Հոգեկարգավորիչ ծրագիրը բաղկացած է եղել 25 հանդիպումներից:

Ամփոփելով վերը ասվածը, նշենք, որ ընտանեկան բռնության ենթարկված երեխայի հետ հոգեկարգավորիչ աշխատանքը տարվել է երեխայի ապագա ընտանիքի մոդելի վերաբերյալ խեղաթյուրված պատկերացումների շտկման ուղղությամբ՝ տղաների մոտ կնոջ վերաբերյալ պատկերացումների, աղջիկների մոտ՝ մոր, հուզական, կոգնիտիվ (ճանաչողական), վարքային ոլորտների հետ, զարգացվել են հուզակամային կողմերը, շտկվել երեխայի վախերը, փոփոխվել շրջապատող աշխարհի և իր անձի հանդեպ վարքի ագրեսիվ ձևերը, աշխատանք է տարվել տրավմատիկ իրավիճակների վերաբերյալ, փոփոխման է ենթարկվել ապրումների իմաստը, ստեղծվել ապրածի նորովի մեկնաբանության հնարավորություն, վերականգնվել է շրջապատող իրականության հանդեպ դրական վերաբերմունքը, ընդլայնվել աշխարհի մասին պատկերացումները, ձևավորվել են ապագայի դրական հեռանկարների մասին պատկերացումներ:

Երրորդ՝ «Երեխաների հանդեպ ընտանեկան բռնությունների կանխարգելման և հաղթահարման ռեթեստավորում» ենթագլխում ներկայացված են ընտանեկան բռնության ենթարկված երեխաների հետ իրականացված ռեթեսթավորման արդյունքները, որոնք մենք անցկացրել ենք ենք հոգեկարգավորիչ աշխատանքներից հետո: Ռեթեստավորմանը մասնակցեցին 85 ընտանեկան բռնության ենթարկված երեխա, որոնց հետ մենք իրականացրել էինք հոգեկարգավորիչ աշխատանքներ և նկատել զգալի դրական փոփոխություններ:

Ռեթեստավորման նպատակով կիրառեցինք այն նույն մեթոդները, որոնք կիրառել էինք մեր հետազոտությունների երկրորդ՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխայի մոտ ապագա ընտանիքի, հակառակ սեռի վերաբերյալ

պատկերացումների բացահայտման փուլում: Այդ մեթոդներն են՝ դերային խաղի, անավարտ հեքիաթի մեթոդները, «Իմ ընտանիքը» պրոյեկտիվ մեթոդիկան: Ռեթեստավորման ընթացքում նկատեցինք, որ արդյունքները բավականին դրական են և տարբերվում են հետազոտության երկրորդ փուլի արդյունքներից:

Այժմ ներկայացնենք այդ փուլի գծապատկերի համեմատական գծապատկերը.

Գծապատկեր 3.



Ռեթեստավորման արդյունքների գծապատկեր

Այսպիսով՝ մեր կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ երեխայի նկատմամբ ընտանեկան բռնությունը մեծապես վնաս է հասցնում և խոչընդոտում երեխայի անձի ներդաշնակ զարգացմանը: Ընտանեկան բռնությունը խեղաթյուրում է նաև երեխաների պատկերացումների ոլորտը, քանի որ մեր հետազոտությունների ընթացքում հաստատվեց մեր վարկածը, որ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մոտ խեղաթյուրված է ապագա ընտանիքի մոդելը՝ տղաների մոտ կնոջ, աղջիկների մոտ մոր կերպարի վերաբերյալ պատկերացումներն ու դիրքորոշումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխաների նկատմամբ ընտանեկան բռնությունների հոգեբանական պատճառականության, ընտանեկան բռնության ենթարկված երեխայի անձի գիտատեսական վերլուծությունների և փորձարարական հետազոտությունների արդյունքները հնարավորություն տվեցին՝ կատարել հետևյալ ***եզրակացությունները.***

1. Երեխայի հանդեպ ընտանեկան բռնությունը ազդում է ապագա ընտանիքի վերաբերյալ անձի բացասական դիրքորոշումների, պատկերացումների ձևավորման վրա:
2. Ընտանիքի կողմից տղա երեխային բռնության ենթարկելը՝ հանգեցնում է հակառակ սեռի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը՝ խեղաթյուրելով կնոջ կերպարը:
3. Ընտանիքի կողմից աղջիկ երեխային բռնության ենթարկելը՝ առաջացնում է ապագա ընտանիքում կնոջ որպես մոր կերպարի խեղաթյուրում:
4. «Ապագա ընտանիքի» մոդելի խեղաթյուրումը հետագայում դրսևորվում է սեփական ընտանիքում և հանդես գալիս որպես ընտանեկան բռնության պատճառ. տղաների դեպքում բռնություն կնոջ նկատմամբ, աղջիկների դեպքում՝ երեխայի:
5. Ընտանեկան բռնության և ծնողի անձնային որոշ առանձնահատկությունների միջև կա որոշակի կապ. ծնողի ընտանեկան մոդելի խեղաթյուրված պատկերացումները, ամուսինների փոխհարաբերությունների միջև խնդիրների առկայությունը հաճախ երեխայի նկատմամբ բռնության պատճառ է հանդիսանում:
6. Ընտանեկան բռնության և ծնողի «իդեալական երեխայի» սպասումների և պատկերցումների միջև կա որոշակի հարաբերակցություն. հաճախ երեխան չի արդարացնում «իդեալական երեխայի» վերաբերյալ ծնողի սպասումները, ինչը լրացուցիչ լարվածություն կարող է առաջացնել ծնողի մոտ և երեխայի նկատմամբ բռնության պատճառ դառնալ:
7. Ընտանեկան բռնության և երեխայի անձի միջև կա որոշակի հարաբերակցություն. երեխայի հուզական անգրգռվողականության բարձր մակարդակը, բարեխղճության և ինքնակառավարման ցածր մակարդակով, հաճախ երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության պատճառ է դառնում:
8. Ընտանեկան բռնության հոգեբանական բացասական հետևանքների հաղթահարումը պահանջում է համալիր մոտեցում, որին ուղղված հոգեկարգավորիչ աշխատանքների շրջանակներում պետք է կազմակերպվեն սեմինարներ և խորհրդատվական աշխատանքներ ծնողների հետ, թրեյնինգներ՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխայի հետ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Օվչյան Ա. Ա., Երեխաների հանդեպ բռնություն կիրառող ընտանիքների տեսակները և դրանց հոգեբանական առանձնահատկությունները, Միջազգային գիտա-գործնական համաժողով «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և սփյուռքում», Երևան, 2012 ապրիլի 13-14, 122-125 էջ:

2. Овчян А. А., Психологическая проблема насилия в семье над детьми, причины и факторы риска, Социальные технологии в современном обществе: материалы Международной научной конференции Четвертых Санкт-Петербургских социологических чтений, 19 апреля 2012г. Ч. 2 Секции 4-5, Круглые столы, стр. 75-79.
3. Օվչյան Ա. Ա., Պատմական տարբեր ժամանակաշրջաններում երեխաների հանդեպ բռնության դրսևորումների հարցի շուրջ, Ժողովածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա, 2012 դեկտեմբերի 14, Ի ՊՐԱԿ, 169-172 էջ:
4. Օվչյան Ա. Ա., Երեխաների նկատմամբ բռնության հիմնախնդրի պատմական ակնարկ, Կանթեղ: գիտական հոդվածների ժողովածու, գլխ. խմբ.՝ Լ. Արզումանյան, Եր.:, «Ասողիկ», 1 (54) 2013, 266-271 էջ:
5. Օվչյան Ա. Ա., Երեխաների հանդեպ ընտանեկան բռնության պատճառականությունը, Կանթեղ: գիտական հոդվածների ժողովածու, գլխ. խմբ.՝ Լ. Արզումանյան, Եր.:, «Ասողիկ», 3 (56) 2013, 253-257 էջ:
6. Ավետիսյան Մ. Ս., Օվչյան Ա. Ա., Դոստոևսկու կյանքի և գործունեության ընդհանուր հոգեբանական վերլուծությունը, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, էդիթ Պրինտ հրատ., 2013 թ., 37-40 էջ:

ОВЧЯН АННА АРАРАТОВНА

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПРИЧИННОСТЬ НАСИЛИЯ НАД ДЕТЬМИ В СЕМЬЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 «Психология развития и образования (педагогическое, возрастное, специальное)
Защита диссертации состоится 30-го сентября 2014 г. в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, у. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования.

Семья является основным звеном для нормального развития личности ребенка. В психологически благоприятной семье царит атмосфера эмоциональной теплоты, все семейные функции и обязанности со стороны родителей выполняются с большой любовью и ответственностью, обеспечивается эмоциональная поддержка членов семьи, чувство безопасности, необходимые для здорового психофизического развития ребенка.

В психологически неблагоприятных условиях ребенок становится самым беззащитным и уязвимым членом семьи, где он получает только то, что могут дать родители. К сожалению, в психологически неблагополучной семье - это безразличие, пренебрежение основными нуждами ребенка, различные формы насилия со стороны родителей – психологическое, физическое, сексуальное. Несомненно, выше перечисленные факторы в угрожают психическому здоровью и гармоничному развитию личности ребенка.

В армянской семье, на протяжении веков отличающейся верностью, нравственностью, единством, в современных условиях, также как и во всем мире, стали обычным явлением семейная нестабильность, конфликтные отношения между членами семьи, насилие над детьми.

Несмотря на то, что семейное насилие над детьми применялось в разные исторические эпохи, до сих пор недостаточно изучено то, как насилие в семье влияет на восприятие ребенка, сферу межличностных отношений, ценностную систему, формирование модели будущей семьи и, наконец, какие субъективные и объективные факторы лежат в основе семейного насилия над ребенком.

Исследование личностных особенностей детей, подвергнутых семейному насилию, последствий семейного насилия, диагностика психологических травм, а также создание психокоррекционных программ, являются главной задачей в современной психологии, поскольку семейное насилие над ребенком может стать причиной преступности, а также воспроизведением собственного детского опыта в обществе.

Следовательно, одна из основных задач нашего исследования, решение вышеупомянутых проблем и предложение практических решений.

Цель исследования.

Исследовать формирование личностных особенностей детей, подвергшихся насилию в семье, их представления о модели будущей семьи, изучить возможные причины насилия в семье, а также разработать соответствующие методы предупреждения и преодоления негативных последствий насилия и жестокого обращения с детьми в их дальнейшем развитии.

Задачи исследования.

1. Исследовать научные представления явления и причин семейного насилия над детьми в разные эпохи.
2. В ходе исследований, выявить детей, подвергшихся семейному насилию.
3. Исследовать личностные особенности и представления о модели будущей семьи у детей, подвергшихся семейному насилию.
4. Выявить и описать причины семейного насилия над детьми.
5. Разработать психологические рекомендации для предупреждения и преодоления негативных последствий семейного насилия в личностном развитии и взаимоотношениях ребенка.

Научная новизна исследования.

Научная новизна проведенных исследований заключается в том, что, с одной стороны, предметом исследования стала причинность семейного насилия над детьми, с другой стороны, то, как насилие в семье влияет на образование модели будущей семьи и их причинно - следственная связь. Также выявлены возможные причины семейного насилия, разработаны пути их предупреждения и преодоления.

Теоретическая значимость исследования.

Выявленные психологические закономерности обогащают научные представления о причинности семейного насилия над детьми, а также о личности и поведении ребенка, подвергнутого насилию в семье.

Следует отметить, что впервые сделана попытка исследовать и выявить причинность семейного насилия над ребенком, рассматривая данную проблематику с точки зрения представлений модели будущей семьи.

Проведенные нами исследования по вопросу семейного насилия над детьми, обогащают теоретические знания в области семейной и психологии личности.

Практическая значимость исследования.

Результаты проведенного исследования могут стать психологическим научным направлением для психологов, изучающих данную задачу, а также использоваться в качестве руководства в психологической практике.

Достоверность и обоснованность.

Проведенные исследования обеспечены высокой надежностью и валидностью использованных методов, количеством методов и исследованных детей, качественным и количественным анализом полученных данных.

Структура работы.

Диссертация сосотоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

По теме диссертации опубликованы 6 статей.

ANNA ARARAT OVCHYAN

PSYCHOLOGICAL CAUSALITY OF VIOLENCE AGAINST CHILDREN IN FAMILY

Thesis for degree of candidate of psychological sciences, speciality 19.00.05
’ ’ Development and Education Psychology (pedagogical, age, special)’ ’
The defence of the dissertation will be held on the 30th of September, 2014 at 12:00 at session of the Special Board of philosophy and psychology 064 HAC (Higher Attestation Commission) on awarding degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: Tigran Mets 17 Avenue, 0010 Yerevan.

SUMMARY

The Relevance of the Research:

Family is a major factor in the normal development of child personality. In a psychologically favorable family, where there is an atmosphere of emotional warmth, all family functions and duties are performed by the parents with love and sense of responsibility, providing emotional support to family members, and guaranteeing a sense of security, which are necessary for a healthy mental and physical development of a child.

In psychologically unfavorable conditions the child is the most helpless and vulnerable member of the family, where it receives only whatever the parents can give. Unfortunately, in psychologically dysfunctional families, those are indifference, neglect of basic needs of the child, and various forms of violence from parents - psychological, physical, sexual. Undoubtedly, the abovementioned factors significantly threaten the mental health and the harmonious development of the child's personality.

In Armenian families, which for centuries were characterized by loyalty, morality, and unity, nowadays cases of family instability, conflicts between family members and child abuse, have become a commonplace, like elsewhere.

Despite the fact that the family violence against children was typical to various historical periods, the ways family violence affects the perception of the child, the scope of interpersonal relationships, the system of values, the formation of a future model of the family and, finally, the subjective and objective factors forming the basis of the family violence against children, have not yet been studied sufficiently.

The study of personality specifics of children, exposed to family violence, consequences of family violence, diagnostics of psychological trauma, as well as the creation of psychological correctional programs, are a major problem in the contemporary psychology studies, for the family violence against children has the potential to become a reason for criminality, as well as the projection of the personal childhood experience in the society. Therefore, among the main problems of the given study are the resolution of the above listed issues and the development of practical recommendations for that purpose.

The Aim of the Research:

The study aims to research the formation of personality specifics in children, exposed to family violence, their conceptions on the model of the future family, study the possible reasons of violence in families, as well as to elaborate relevant methods of

prevention and overcoming the negative impact of the violence and cruel treatment of children on their development.

The objectives are:

1. To research the scientific understanding of the phenomenon and the reasons of family violence against children in various periods of history.
2. During the survey, to identify the children exposed to family violence.
3. To research the personality specifics and the conceptions of the model of the future family among children, exposed to family violence.
4. To identify and to describe the reasons behind the violence against children in families.
5. To elaborate psychological recommendations for the prevention and overcoming of the negative consequences of family violence in the personality development and interpersonal relationships of children.

Scientific Novelty of the Research:

The scientific novelty of the study is, on one side, the object of the study, which is the causality of the family violence against children; on the other side, is the impact of the family violence on the formation of the model of the future family in children, as well as their causal effect. The study also identifies the possible reasons of the family violence; and develops ways of prevention and overcoming of those reasons.

Theoretical Significance of the Research:

The identified psychological patterns enrich the scientific understanding of the causality of family violence against children, as well as the personality and behavior of children, exposed to violence in families.

It should be noted that this research is the first attempt to explore and identify the causes of domestic violence against children, considering these problems from the point of view of the model of representations of a future family.

Our research on the issue of family violence against children enriches the theoretical knowledge in the field of family psychology and personality psychology.

Practical Importance of the Research:

The results of the survey can serve as psychological scientific paradigm for psychologists studying the problem; besides, the outcomes can also be used as recommendations in practical psychology.

Reliability and Validity:

The conducted surveys hold high level of reliability and validity of the applied methods, quantity of methods and sampling of surveyed children, quantitative and qualitative analyses of the retrieved data.

Structure of the Research:

The dissertation is comprised of introduction, three chapters, conclusion and references.

6 articles are published relevant to the topic of dissertation.